ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող., թիվ 17, հեռ. ՝ 093-51-02-01, էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 05 >> դեկտեմբերի 2011 թվականի N 12-Ն

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է .**

Սահմանել Հայանիստ համայնքի 2012 թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական /շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ՝

հիմնական օբյեկտների համար ՝

1/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեզործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ 7500 դրամ.

2/ Սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 15000 դրամ ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 25000 դրամ ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 35000 դրամ ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար ՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 1000 դրամ ,

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 2500 դրամ ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝ 1500 դրամ/.
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ՝ 2500 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել ՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 2500 դրամ;

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 2500 դրամ;

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ 350 դրամ

2) Հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիք տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել ՝ 150000 դրամ

3) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար սահմանել ՝ 50000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24 ^{00} - ից հետո աշխատելու թույլտվու-թյան համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբեկտների համար՝ 40000 դրամ
2/ հանրային սննդի և զվարճանքի օբեյկտների համար՝ 50000 դրամ
3/ բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ
4/ խաղատների կազմակերպման համար՝ 750000 դրամ
5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000 դրամ
6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 125000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 1500 դրամ.

2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 2500 դրամ.

3/ այլ արտաքին գովազդի համար ՝ 1000 դրամ.

4/ դատարկ գովազդային վահանակների համար ՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000 դրամ.
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5000 դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:
11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 2000 դրամ:
13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության վճար չսահմանել:
14. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ 2000 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ազարյան Անահիտ

Ավագիմյան Ֆարիդա

Ավանեսյան Գրետա

Գևորգյան Սարգիս

Բեգլարյան Համլետ

Իսպիրյան Հովհաննես

Թոխյան Արֆենիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՍԱՐԳԻՍՅԱՆ

2011 թ. դեկտեմբերի 5

Գ. Հայանիստ

Հ/Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող., թիվ 17, հեռ. ՝ 093-51-02-01, էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> դեկտեմբերի 2011 թվականի N 16-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության " Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.
համայնքի ***ավագանին որոշում է*** ՝

1.Հաստատել Հայանիստի համայնքի 2012 թ. վարչական բյուջեն եկամուտների և ծախսերի գծով՝ _____32435.7__ հազար դրամ

2. Սահմանել համայնքի 2012 թվականի վարչական բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամուտների հետևյալ չափերով՝ հազար դրամ

1. Հարկեր և տուրքեր, այդ թվում	_____6809.5_____
1/1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	_____4018.5_____
Գույքահարկ շենք. և շինությունների, որից	_____813.5_____
Ֆիզիկական անձանցից.	_____413.5_____
Իրավաբանական անձանցից	_____400.0_____
Հողի հարկ, այդ թվում	_____3205.0_____
Ֆիզիկական անձանցից	_____2705.0_____
Իրավաբանական անձանցից	_____500.0_____
1/2 Գույքահարկ փոխադրամիջոց.	_____1716.0_____
1/3 Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում	_____1075.0_____
Տեղական տուրքեր, որից՝	_____1075.0_____
շինարարության թույլտվության համար	_____60.0_____
Ծխախոտի վաճառքի թույլտվություն	_____60.0_____
Ոգելից խմիչքների վաճառքի թույլ. համար	_____80.0_____
Վառելիքի վաճառքի համար	_____750.0_____
ժամը 24:00 հետո աշխատելու համար	_____125.0_____
2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում	_____23918.7_____
2/5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/	_____23918.7_____
3. Այլ եկամուտներ, այդ թվում	_____1707.5_____

3/3 Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ _____1107.5_____

Հողերի վարձակալություն _____1107.5_____

3/4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների

մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում _____600.0_____

Պատվիրակված լիազորություններ _____600.0_____

3. Հաստատել Հայանիստ համայնքի 2012 թ. վարչական բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով

հազար դրամ

01.1.1 Օրենսդիր և գործադիր մարմիններ _____17989.0_____

04.2.1 Գյուղատնտեսություն _____600.0_____

01.6.1 Ընդ. բնույթի հանր.ծառայություն _____460.0_____

(այլ դասի չպատկանող)

05.1.1 Աղբահանում _____1000.0_____

08.1.1 Հանգստի և սպորտի ծառայութ _____260.0_____

09.1.1 Նախադպրոցական կրթություն _____5600.0_____

10.7.1 Սոց. հատուկ արտոնություններ _____2200.0_____

(այլ դասի չպատկանող)

01.3.3 ընդհանուր բնույթի այլ ծառայ. _____732.0_____

09.2.1 Հիմնական ընդ կրթություն _____250.0_____

08.2.4 Այլ մշակութ. կազմակ. _____900.0_____

09.4.1 Բարձր մասնագիտ կրթություն _____200.0_____

09.3.2 Միջին մասն. կրթություն _____50.0_____

06.3.1 Ջրամատակարարում _____570.0_____

11.1.2 Վարչական բյուջ.պահուստային ֆոնդ _____1624.7_____

1 Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական հոդվածների, հետևյալ չափերով

բյուջետային դասակարգման հոդված	բյուջետային դասակարգման հոդվածի անվանումը	գումար հազ.դրամ
4111	աշխատավարձ	
12622.0		
4112	պարգևատրում	924.0
4131	սոց.ապահ. վճարներ	2920.0
4211	բանկային ծառայություն	70.0
4212	էներգետիկ ծառայություններ	550.0
4213	կոմունալ ծառայություն	1230.0
4214	կապի ծառայություն	420.0
4216	գույք և սարք.վարձ.	240.0
4221	գործուղում	100.0
4233	աշխ.մասնագիտ.զարգաց.ծառ.	100.0

4234	հանրային տեղեկատվություն	240.0
4235	կառավարչական ծախսեր	
150.0		
4239	ընդ. բնույթի այլ ծառայութ.	700.0
4241	մասնագիտ.ծառայություն	23.0
4252	մեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում	200.0
4261	գրասենյակային նյութեր	
250.0		
4264	տրանսպորտային նյութեր	
400.0		
4267	սնունդ և տնտեսական նյութեր	80.0
4269	հատուկ նպատակային այլ նյութեր	
200.0		
4637	ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ	
5600.0		
4726	հուղարկավորության նպաստներ	
400.0		
4729	այլ նպաստներ	
2300.0		
4819	նվիր. այլ շահույթ չհետա. կազմ.	
992.0		
4891	պահուստային միջոցներ	1624.7

2 Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված հատկացումների բաշխումը ըստ առանձին հիմնարկների, ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածներով թիվ 1 հավելվածի համաձայն:

3 Հաստատել համայնքի 2012թ ֆոնդային բյուջեն եկամուտների և ծախսերի գծով_____

4 Հաստատել համայնքի 2012թ. ֆոնդային բյուջեի եկամուտները,ըստ առանձին եկամտատեսակների և հատկացուների հետևյալ չափերով՝

ա) վարչ բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե__0_____

բ) համայնքի ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ, որը ուղղվում է ծախսերի ծածկման ___0_____

գ) հողերի օտարումից մուտք ----

դ) Վարչական բյուջեի պահ.ֆոնդից հատկացումներ -

5 Հաստատել համայնքի ֆոնդային բյուջեյից հատկացումների հաշվին ֆինանսավորող ծախսատեսակները, ըստ գործառնական և տնտեսգիտական դասակարգման հետևյալ չափերով

Հայանիստի համայնք

Հավելված N 1

Վարչական բյուջեից հատկացուների բաշխումը ըստ հիմնարկների

Օրենսդիր և գործադիր մարմին 01.1.1

4111	աշխատավարձ	12012.0
4112	պարգևատրում	924.0
4131	սոց.ապ. վճար	2760.0
4212	էներգետիկ ծառայություններ	320.0
4213	կոմունալ ծառայություն	60.0
4214	կապի ծառայություն	420.0
4216	գյուքի և սարք. վարձակալություն	240.0
4221	գործուղում	100.0

4234 հանրային տեղեկատվություն 200.0
4241 մասնագիտական ծառայութ. 23.0
4252 մեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում 200.0
4261 գրասենյակային նյութեր
250.0
4264 տրանսպորտային նյութեր
400.0

Գյուղատնտեսություն 04.2.1

4111 Աշխատավարձ
480,0
4131 Սոց վճար
120.0

Ընդ. բնույթի հանր.ծառայություն 01.6.1

4211 բանկային ծառայություն 70.0
4234 տեղեկատվական ծառայություն 40.0
4235 կառավարիչ ծախսեր
150.0
4819 նվիրատվություն,այլ շահ.չհետ.կազմ 250.0
Աղբահանում 05.1.1
4213 կոմունալ ծառայություն 1000.0
Հանգստի և սպորտի ծառայություն 08.1.1
4727 կրթական, մշակութային և սպորտային նպաստներ 200.0
4819 նվիր. այլ շահույթ չհետա. կազմ.
60.0
Ընդհանուր բնույթի այլ ծառ. 01.3.3
4819 նվիր. այլ շահույթ չհետա. կազմ. 732.0
Նախադպրոցական կրթություն 09.1. 1
4637 ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ
5600.0
Սոց. հատուկ արտոնություններ 10.7.1
(այլ դասի չպատկանող)
4726 հուղարկավորության նպաստներ
400.0
4729 այլ նպաստներ
1800.0
Ջրամատակարարում 06.3.1
4111 աշխատավարձ 130.0
4131 սոց. այլ վճար 40.0
4212 էներգետիկ ծառայություններ 230.0
4213 կոմունալ ծառայություն 170.0

Հիմնական ընդ կրթություն 09.2.1
4729 այլ նպաստներ 250.0
Այլ մշակութ. կազմակերպ. 08.2.4
4239 ընդ. բբնույթի այլ ծառ. 700.0
4269 հատուկ նպատակային այլ նյութեր 200.0
Բարձ. մասնագիտ կրթություն 09.4.1
4729 այլ նպաստներ 200.0
Միջն. մասնագիտ կրթություն 09.3.2
4729 այլ նպաստներ 50.0

Պահուստային ֆոնդ 11.1.2

4891 պահուստային միջոցներ 1624.7

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Ազարյան Անահիտ
2. Ավագիմյան Ֆարիդա
3. Ավանեսյան Գրետա
4. Գեվորգյան Սարգիս
5. Բեգլարյան Համլետ
6. Իսպիրյան Հովհաննես
7. Թոխյան Արֆենիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

2011 թ. դեկտեմբերի 12

Գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող., թիվ 17, հեռ. ՝ 093-51-02-01, էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12>> դեկտեմբերի 2011 թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության " Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով.

համայնքի ***ավագանին որոշում է*** ՝

Հաստատել Հայանիստ համայնքի գյուղապետարանի և համայնքային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների 2011 թվականին իրականացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման ակտերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Ազարյան Անահիտ կողմ
2. Ավագիմյան Ֆարիդա
3. Ավանեսյան Գրետա կողմ
4. Գեվորգյան Սարգիս կողմ
5. Բեգլարյան Համլետ կողմ
6. Իսպիրյան Հովհաննես կողմ
7. Թոխյան Արֆենիկ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

2011 թ. դեկտեմբերի 12

Գ. Հայանիստ